


Ավտոմատացման և հեռահաղորդակցության ներդրման հնարավորությունների ուսումնասիրություն



Երկիր. Հայաստանի Հանրապետություն

Պատվիրատու Համաշխարհային Բանկ,
«Համայնքային Չարգացման
Ծրագրի Նեկավարման Գրասենյակ»
ՊԼ

Ժամկետները Օգոստոս, 2004թ. – Փետրվար, 2005թ.

Տեխնիկական առաջարրանք

- Ուսումնասիրել Երևանի «Ջրմուղ-Կոյուղի» ՓԲԸ-ի շահագործման համակարգերում ավտոմատացման և հեռահաղորդակցության ներդրման հնարավորությունները,
- Առաջարկել ԵԶԿԸ տեխնոլոգիական և կոմերցիոն ոլորտների կառավարման ավտոմատացման և հեռահաղորդակցության ներդրման արդյունավետ ուղիներ:



Ծրագրի և կատարված ծառայության համառոտ մկարագիրը

ԵԶԿԸ տեխնոլոգիական և կոմերցիոն ոլորտների կառավարման գործընթացների ուսումնասիրությունների և արդյունքների վերլուծության հիման վրա մշակվել են դրանց ավտոմատացման և հեռահաղորդակցության փուլային ներդրման առաջարկություններ և որպես իրատեսական ներդրման առաջին քայլ առաջարկվում է ջրամատակարարման համակարգերից մեկում՝ Ապարան - Երևան համակարգում փորձնական ծրագրի իրականացում: Փորձնական ծրագրի գաղափարում ներառված է նաև ներկայացված առաջարկությունների ուժեղ և բույլ կողմերի բացահայտում, փորձի և ձեռք բերված հմտությունների ու գիտելիքների հարստացում և մյուս համակարգերում դրանց կիրառում:

Ուսումնասիրություններն ու առաջարկությունները ընդգրկում են Երևանի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի ողջ համալիր՝ ջրադրյուններից մինչև սպառող, շղթայով:



Աշխատանքի նպատակներ:

ԵԶԿԸ համակարգերի կառավարման գործընթացում ավտոմատացման և հեռահաղորդակցության ներդրման արդյունավետ շրջանակների բացահայտումը: